# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

**ք. Վարդենիս** **12/01/2024**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
# ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 20 անդամներ:

Բացակա էին՝ Վարուժան Ավետիսյանը, Ահարոն Խաչատրյանը, Ռաֆայել Խչեյանը, Արտակ Մանուկյանը, Արամ Մելքոնյանը, Սաթենիկ Մինասյանը, Սեվակ Սիմոնյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Կարեն Մկրտչյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կամո Զարոյանը**

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել՝ 2024 թվականի հունվարի 12-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը՝ բաղկացած 1 հարցից.
1.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28.12.2023 ԹՎԱԿԱՆԻ <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՍՈՍ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՉԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 181-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի հունվարի 12-ին ժամը 15:00-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստը: Նիստը վարում է համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կարեն Մկրտչյանը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 20-ը, բացակայում էին ավագանու անդամներ<<Ահարոն Խաչատրյան>> խմբակցությունից՝ Սաթենիկ Մինասյանը և Վարուժան Ավետիսյանը, <<Քաղաքացիական պայմանագրի խմբակցությունից>> Արամ Մելքոնյանը, Արտակ Մանուկյանը, Սևակ Սիմոնյանը և Ռաֆայել Խչեյանը, հարգելի բացակայում էր համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը: Նիստը իրավազոր է: Օրակարգը հաստատելու մասին հարցը դրվեց քվեարկության:

20 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 1-Ա/

Լսեցին
***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28.12.2023 ԹՎԱԿԱՆԻ <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՍՈՍ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՉԱՎՃԱՐԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 181-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. <u>ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ</u>/***

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Ուժը կորցրած ճանաչել Վարդենիս համայնքի ավագանու 28.12.2023 թվականի <<Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի բնակիչ Սոս Բարսեղյանին վարձակալական հիմունքներով պատկանող անշարժ գույքի վարձավճարի մասով կուտակված ապառքը օրենքով սահմանված կարգով մասնակի զիջելու մասին>> N181-Ա որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կարեն Մկրտչյանը, պարզաբանելով, որ նախորդ ավագանու նիստին վարձակալական հողի զիջում է եղել, որը շտապողականության արդյունք էր, ուստի առաջարկեց քվեարկել և որոշումը ճանաչել անվավեր: Այլ առաջարկկություններ չեղան: Հայտարարվեց քվեարկություն:

20 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 2-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱՁՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ՄԵԼԱՆՅԱ ԵՓՐԵՄՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՇԱԲՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԶԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՋԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ*

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ _____

*Նիստն արձանագրեց՝* Կամո Զարոյանը _____